

Կ Ր Օ Ն Ա Կ Ա Ն

ի մեծի աւուր Զայտնութեան Քրիստոսի, վերաբաժնիս քանին Էսայեայ, յետ որոյ եւ հաւարմունք աստուածաշունչ քանից Քարգման յաւրինեալ ի խորհուրդ թագաւորաց որ յերկրի, արապ ցուցմամբ եւ իմաստասիրական սահմանաւ շարադրեալ Վահրամ վարդապետի, յորում աւուր աւծեալ ծնունդդեցաւ թագաւորն Հայոց Մեծն Լեւոն

(Շարունակութիւն)

Թէ՛ Ո՛վ, է՛ ԱՌԱՋԻՆ ԹԱԳԱՆՈՐ՝ Եւրդ վերագոյն այսմ առհմանի, ե՛ւ ԼԵՒ քան զոր կարեմք իմանալ եւ ճառել, ո՞չ այլ ոք առաջին թագաւոր, բայց թէ՛, կրանական եւ փառաւորեալ Սուրբ Եւրորդու թիւնն, երկրպագեալ ՚ի մի Աստուածութիւն եւ Տէրութիւն, որ ըստ մարգարէին թէ՛, «թագաւոր մեծ ՚ի վերայ ամենայն երկրի աստուած է՛ւ. Առ ՚ի յինքեան բարեբարութենէ արարչագործելոցն իշխէ առհասարակ վերնոցն եւ ներքնոցն: Եւ զամենեւեան շարժելով միեզէն եւ պարզ զաւրու թեամբն իւրով յիւրաքանչիւր բնութիւն եւ ՚ի մի միաւորութիւն զնոսին պահեալ պնդէ եւ դարձուցանէ ՚ի ժողովարարն իւր նախախնամութիւն եւ յատուածարար պարզութիւն: «Ասի զբազումն եւ զգնազանն ըստ փառաց եւ ըստ պատուոյ զանմարմինան՝ որք են պարզք եւ անշարադիրք բնութեամբ, եւ ապա . . .*) ամենայն: Առաջնապէս զորս ՚ի սմա նրբագոյնք են, որպէս լուսաւորացդ կարգ զանազանութեամբ պայծառութեան եւ ընթացից. եւ ապա զորս ՚ի հակառակ պատճառաց ՚ի մի միութիւն եղեն գոյացեալ, որպէս զմարդ ի հոգւոյ գտնով եւ ՚ի մարմնոյ, երկնային եւ երկրաւոր, մահկանացու եւ անմահ, ընդ որոց եւ զամենայն արիւնաւոր կենդանիս զառ ՚ի բազմաց շարադրեալսս, նաեւ զամենայն աղզի աղզի անշնչեց առասկա, այլ եւ զամենեւեոն զգալեացս

դարմատ եւ զսկիզբն, զտարկրս, որոց սիրելութիւն եւ հակառակութիւն սրարշական հրամանաւ նորին, զամենայն նիւթականս յիւրումէութեանն անլուծանելի ունի: Աւստպէս ամենակալ թագաւորութեամբն իւրով զամենեւեան կալեալ եւ պնդեալ ունի յանքակտելի միութիւն եւ խաղաղութիւն. եւ ամենակարող զաւրու թեամբն իւրով՝ ամենեւեոն ըստ իւրաքանչիւր առասկի կառավարէ եւ սիրէ, յորս եւ խնայէ եւ նախախնամէ ըստ Սողոմոնի թէ՛՝ «Տիրելիք քո ամենեւեոն, խնայել ապ քեզ յամենեւեան»: Ուստի յանբաւ բարեբարութենէն իւրոյ եւ զայս եւս պատիւ շնորհաց արարածոց իւրոց, որպէս ՚ի հրեզննացն դաս կարգեաց յիշխանական պետութենէն իւրմէ իշխանութիւնս եւ տէրութիւնս, զաւրութիւնս եւ պետութիւնս, առ ՚ի նախախնամել զնուսատագոյնան, եւ հաղորդեցուցանել գերագոյն լուսափայլութեանցն: Վանպի են ՚ի նոսաւորդարեւ խոնարհագոյնք եւ վեհագոյնք, եւ նոցին պաշտաւնեայք եւ այլք, որպէս թէ՛ ասիցէ ոք, անդրանիկք անմարմին էութեանցն եւ առ դուրս գերազոյի Եւրորդու թեանն սերտեալք. զորս ոչ միայն յանուանց նոցին է իմանալ, այլ եւ ՚ի զործառնութեանցն, յորժամ ՚ի ձեւ մարմնոյ երեւեալ աստուածաբանիցն խորհրդագրաւ առնէին զնոսա աստուածայնոցն, որպէս զարքն երեւեալ առ Ազնկիէլեւ, ընդ իշխանութեամբ կացեալ

*) Զօրինակին եղծեալ են բառք ինչ:

էր, երեւեցան առնն որ զգեցեալ էր զպճըղ-
նաւորն, և ունէր զկամարն ընդ մէջ, առ որ
ձայն հրամանին Աստուծոյ բացայայտեալ
լինէր. "Ա՛նց, առէ, դու ընդ մէջ քաղաքիդ
և զիր նշան 'ի ճառարս զղջացելոցն" և յայլն
ասաց. "Գնացէ՛ք զհետ նորա և կոտորեցէ՛ք,
ոչ զորս դուք կամիջէք, այլ զորս նա թո-
ղուցու 'ի նշանադրելոցն": Աւ գարձեալ
այն՝ որ զգեցեալ էր զբաղէնն փառաց և կայր
'ի վերայ գետոյն զզանազան տեսիլս կերպա-
ցուցանելով Վանիէլի մարգարէի. սակայն
զթարգմանութիւն տեսլանն ոչ ինքն յայտ-
նաբանէր, այլ խոնարհագունի քան զինքն
հրտմայէր զայս առնել, "Վարդիէ՛լ, իմացո՛
ղտեսիլդ Վանիէլի": Աւ առ Օւրբարիա. և
երեւեալն որ ունէր 'ի ձեռին զձող չափոյն և
լար շինութեանն 'ի վեհագունիցն գոլով
հրեշտակական դասուց, և ('ի) հրամանն
Օւրբարիայ պատասխանէր, թէ՛ "Արթամ
չափել զԱրուսագէմ": Աւ ոչ ևս զկատա-
րելագոյն հատոյց մարգարէին զպատասխա-
նիսն, վաղագոյն համարել զնա իւրում խաւ-
սակցութեան, մինչև այլ հրեշտակ եկն ընդ
առաջ նորա իբրև զսպասաւոր իւր, առ որ
հրամայեաց, "Ընթա՛, առէ, և խաւսեաց
ընդ երխասարդին ընդ այնմիկ թէ՛ պողո-
ղից բնակեացէ Արուսագէմ՝ 'ի բազմութենէ
մարդկան և անասնոց": Աւ յԱզելիէլ, թէ՛
"Զգեաց քերոր մի զձեռն, և առ հուր և
հա 'ի ձեռն այլոյ, և նա ցանեաց 'ի վերայ
քաղաքին": Աւ 'ի Վանիէլն՝ "Ալ հրաման
յառաջնոյ իշխանէն": Աւ այսոքիկ զիշխա-
նոց և զիշխեցելոց նշանակին: Բացց տես
զգողութիւնն գրոց, զի ոչ երբէք զնոսա
թաղաւորս կուէ, այլ զիշխանս և զգաւա-
փորս զաւրացն, և պետութիւնս, և զաւ-
րութիւնս, եռամէնալ քիչ հաւր թաղա-
ւորութեամբ, միայնոյ և առաջին թաղա-

ւորին: Օկնի ասացելոցս բեր ըստ երրորդ
խոստմանն մերում տեսցուք, թէ՛ յորմէ՞ հե-
տէ, կամ զեւրդ 'ի մարդիկ սկսաւ թաղա-
ւորութիւնն:

ՍԿԻԶԲԵՆ ՄԱՐԳԱՐԻԱ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ:

Ի սկիզբն մարդկութեանս շնորհեցաւ
նմա այս պատիւ. զի արար Աստուած զմարդն
'ի պատկեր իւր. «Ըստ պատկերի Աստուծոյ
արար զնա. և աւրհնեալ զնա, ասաց, իշ-
խեցէ՛ք ձկանց ծովու և թռչնոց և անասնոց,
ամենայնի որ 'ի վերայ երկրի»: Աւ այսպէս
թաղաւոր կացոյց նա երեւել արարածոցս.
թաղաւորութեամբ իւրով հնազանդեալ,
զորմէ Վաւիթ ճառէ. "Փառաւք և պա-
տուով պսակեցիր զնա, և զամենայն ինչ
հնազանդ արարեալ 'ի ներքոյ ոտից նորա".
այլ քանզի նա 'ի պատուի էր և ոչ իմացաւ.
անհնազանդ եղեալ Արարչին իւրոյ, անկաւ
ընդ հնազանդութեամբ որոյ իշխէին, զորս և
պաշտեաց իսկ զարարածս և ոչ զԱրարիչն. և
մարմին լինելովն զրկեցաւ 'ի շնորհաց հոգ-
ւոյն, պաշտաւնեաց եղեալ մեղացն, ծառայ-
եաց նոցին, ըստ Տեառն մերոյ հրամանին,
թէ՛ "Որ առնէ զմեզս, ծառայէ մեղաց". և
Պաւղոսի, ասելով եթէ՛ "Մինչ առնէիք ըզ
մեզս, ծառայէիք մեղացն", որով և անկաւ մե-
ղուցեալն ընդ մահու թաղաւորութեամբ:
Աւ յառաջանալով ժամանակին, թէպէտ
ազգ մարդկան իշխէին զգալեացս ամենայնի,
սակայն ոչ որպէս 'ի սկզբանն պարզեցաւ
նոցին, այլ դաւեալք և դաւաճանեալք 'ի
հնազանդելոցն, և 'ի վեր և 'ի վայր ամե-
նայնն խառնակեալք: Այսն որոյ յորս մնաց
կայծակն բարեպաշտութեան, թէպէտ տի-
րեցին ազգաց և ժողովրդոց, ոչ երբէք թա-
ղաւորական անուամբ բարգաւաճեալ պան-
ծային, այլ զանձինս 'ի չափոյ ունէին, որպէս
Աբրաամ, և որ յառաջ քան զնա նահա-